

C (2007) 2034

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ, ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵԻՑ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐԿՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I.	3
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՆՔՎՈՂ ԲՈՒՆՈՐ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ	3
ՄԱՍ II.	6
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ	6
II. 1. Ընդհանուր սկզբունքները	7
II.2. Պայմանագրերի կնքմանը մասնակցելու իրավունքը	7
II.2.1 Քաղաքացիության վերաբերյալ կանոնը	7
II.2.2 Ծագման վերաբերյալ կանոնը	8
II.2.3 Քաղաքացիության և ծագման վերաբերյալ կանոններից բացառությունները	8
II.2.4 Պայմանագրերի կնքման գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու հիմքերը	8
II.2.5 Պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը	8
II.3. Սրբութային բոլոր ընթացակարգերի համար ընդհանուր կանոնները	8
II.4. Ծառայությունների մատուցման պայմանագրերը կարգավորող կանոնները	9
II.4.1 200 000 եվրո կամ ավելի բարձր ունեցող պայմանագրերը	9
II.4.2 200 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը	10
II.5. Մատակարարման պայմանագրերը կարգավորող կանոնները	10
II.5.1 150 000 եվրո կամ ավելի բարձր գին ունեցող պայմանագրերը	10
II.5.2 60 000-ից մինչև 150 000 եվրո գին ունեցող պայմանագրերը	10
II.5.3 60 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը	10
II.6. Աշխատանքների կատարման պայմանագրերը կարգավորող կանոնները	11
II.6.1 5 000 000 եվրո կամ ավելի գին ունեցող պայմանագրերը	11
II.6.2 300 000-ից մինչև 5 000 000 եվրո գին ունեցող պայմանագրերը	11
II.6.3 300 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը	11
II.7. Մրցակցային բանակցությունների կիրառումը	12
II.8. Հատուկ դեպքերը	12
II.8.1 Համաֆինանսավորումը	12
II.8.2 Անդամ երկրների պետական կառավարման մարմինները	12
II.8.3 Միջազգային կազմակերպությունները և համաֆինանսավորումը	13
II.8.4 Գնումների կենտրոնական գրասենյակները	13

ՄԱՍ I.

ԱՐՏԱՔԻՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԿՆՔՎՈՂ ԲՈԼՈՐ ԳՆՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐԸ

Եթե ծառայությունների մատուցման, մատակարարման և աշխատանքների կատարման պայմանագրերը, որոնք ֆինանսավորվում են Համայնքի կողմից և կնքվում են Համայնքի և երրորդ երկրների միջև համագործակցության նպատակով կամ ֆինանսավորվում են Եվրոպական միության ընդհանուր բյուջեից Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (ԸԱԱՔ) իրականացման նպատակով, կնքվում են շահառու պետության պայմանավորվող մարմնի կամ Հանձնաժողովի կողմից շահառուի համար և նրա անունից կամ, ԸԱԱՔ դեպքում՝ Հանձնաժողովի կամ երրորդ անձի կողմից, որը պատասխանատու է բյուջեից ֆինանսավորվող գործողության իրականացման համար՝ համաձայն Եվրոպական միության մասին պայմանագրի V բաժնի, ապա գնումների գործընթացը կարգավորվում է հետևյալ իրավական հիմքերով.

- Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 13-ի 1995/2006 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ) փոփոխված՝ «Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի մասին» Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի թիվ 1605/2002 կանոնակարգ (ԵՀ, Եվրատոմ) (այսուհետ՝ Ֆինանսական կանոնակարգ),

- Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 20-ի թիվ 1261/2005 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ), Հանձնաժողովի 2006 թվականի օգոստոսի 7-ի թիվ 1248 կանոնակարգով (ԵՀ, Եվրատոմ) և Հանձնաժողովի 2007 թվականի ապրիլի 23-ի թիվ 478/2007 կանոնակարգով փոփոխված՝ «Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի մասին» Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի թիվ 1605/2002 կանոնակարգի (ԵՀ, Եվրատոմ) կիրարկման մանրամասն կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2342/2002 կանոնակարգ (ԵՀ, Եվրատոմ) (այսուհետ՝ Կիրարկող կանոններ),

- Համագործակցության և արտաքին օժանդակության տարբեր ծրագրերին վերաբերող կանոնակարգերը և այլ հատուկ փաստաթղթերը, ինչպես նաև հիմնական ակտերը կամ այն ակտերը, որոնք վերաբերում են Եվրոպական միության մասին պայմանագրի V բաժնի իրականացմանը (Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն (ԸԱԱՔ) / Անվտանգության և պաշտպանության եվրոպական քաղաքականություն (ԱՊԵՔ)): Հղում է կատարվում արտաքին գործողությունների նկատմամբ կիրառվող համապատասխան դրույթներին, մասնավորապես Ֆինանսական կանոնակարգի՝ արտաքին գործողությունների համար սահմանված հատուկ դրույթներին վերաբերող Երկրորդ մասի IV բաժնին և դրա՝ պետական գնումների մասով արտաքին գործողությունների համար սահմանված հատուկ դրույթների վերաբերյալ III գլխին:

Սույն կանոններով և ընթացակարգերով կարգավորվում են ծառայությունների մատուցման, մատակարարման և աշխատանքների կատարման՝ Եվրոպական համայնքների բյուջեից ֆինանսավորվող պայմանագրերի կնքման հետ կապված հարաբերությունները, բացառությամբ այն պայմանագրերի, որոնց դեպքում Հանձնաժողովը հանդես է գալիս որպես պայմանավորվող մարմին իր սեփական միջոցների հաշվին: Հանձնաժողովն ապահովելու է պայմանավորվող մարմինների կողմից սույն կանոններով և ընթացակարգերով սահմանված պայմանների կատարումը:

Լիազորող պատվիրակված պաշտոնատար անձը Եվրոպական հանձնաժողովի համապատասխան վարչությունների հետ համատեղ սույն կանոնների կիրարկման նպատակով հաստատելու է օրինակելի պայմանագրերն ու աշխատանքային

ցուցումները: Օրինակելի պայմանագրերն ու աշխատանքային ցուցումները ներկայացված են «ԵՀ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի գործնական ուղեցույց»-ի հավելվածների տեսքով:

Ծառայությունների մատուցման, մատակարարման և աշխատանքների կատարման՝ Զարգացման եվրոպական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի կնքումը կարգավորվում է հատուկ կանոններով՝ 2005 թվականի հունիսի 25-ին Լյուքսեմբուրգում ստորագրված Համաձայնագրով<sup>1</sup> փոփոխված՝ 2000 թվականի հունիսի 23-ին Կոտոնուում ստորագրված ԱԿԽ-ԵՀ (Աֆրիկյան, Կարիբյան և Խաղաղօվկիանոսյան երկրներ – Եվրոպական համայնք) գործընկերության համաձայնագրի<sup>2</sup> դրույթների, ինչպես նաև ԱԿԽ-ԵՀ Նախարարների խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 2/2002 որոշման<sup>3</sup> դրույթների համաձայն:

Սույն կանոններն ու ընթացակարգերը չեն կիրառվում այն գործողությունների նկատմամբ, որոնք ԵՀ մարդասիրական օգնության գրասենյակի (ECHO) կողմից իրականացվում են մարդասիրական օգնության տրամադրման կամ անհետաձգելի աշխատանքների իրականացման շրջանակներում՝ Կիրարկող կանոնների 238(2) հոդվածի համաձայն:

Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացմանն ուղղված հատուկ անդամակցության ծրագրի (SAPARD<sup>4</sup>) նպատակներով՝ սույն կանոնների և ընթացակարգերի դրույթները կիրառվում են ապակենտրոնացված կառավարման նկատմամբ՝ Ֆինանսական կանոնակարգի 167(2) հոդվածի համաձայն:

Եթե Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի հիմնադրման հիմնական դրույթները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1638/2006 կանոնակարգի (ԵՀ) հիման վրա տրամադրվող Համայնքի օժանդակությունը կարգավորվում է համատեղ ղեկավարման մարմնի կողմից, ապա կիրառվում են գնումների վերաբերյալ այն կանոնները, որոնք սահմանված են այդ կանոնակարգի<sup>5</sup> կիրարկող կանոններով:

<sup>1</sup> ՊՏ L 287, 28.10.2005թ., էջ 4.

<sup>2</sup> ՊՏ L 317, 15.12.2000թ., էջ 3.

<sup>3</sup> ՊՏ L 320, 23.11.2002թ., էջ 1.

<sup>4</sup> Խորհրդի 1999 թվականի հունիսի 21-ի 1268/1999 կանոնակարգը, որը վերաբերում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի՝ անդամակցության հայտ ներկայացրած երկրներում նախանդամակցային շրջանում գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի զարգացման նպատակով իրականացվող նախանդամակցային միջոցառումների համար Համայնքի կողմից տրամադրվող օժանդակությանը, ՊՏ L 161 26.06.1999թ., էջ 87: Այս կանոնակարգը բազմիցս փոփոխվել է Խորհրդի կողմից և Հանձնաժողովի կիրարկող բազմաթիվ կանոնակարգերի առարկան է եղել:

<sup>5</sup> Թիվ 1638/2006 կանոնակարգի (ԵՀ) 21.9 հոդված (ՊՏ L 310, 9.11.2006թ.)

## ՄԱՍ II.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

## **II. 1. Ընդհանուր սկզբունքները**

Եթե Համայնքի կողմից արտաքին գործողությունների նպատակով տրամադրված դրամաշնորհի շրջանակներում որևէ գործողության իրականացման համար դրամաշնորհի շահառուից պահանջվում է գնումներ կատարել, ապա գնման պայմանագիրը պետք է կնքվի տնտեսապես ամենաշահավետ հայտի (այսինքն՝ որակի և գնի լավագույն հարաբերակցությունն առաջարկող հայտի) հիման վրա՝ հավանական կատարողների համար թափանցիկության և արդար մրցակցության սկզբունքներին համապատասխան և շահերի բախումից խուսափելուն ուղղված միջոցների ապահովմամբ:

Այդ նպատակով, դրամաշնորհի մասին պայմանագրերով նախատեսվում է ստորև ներկայացված II.2 – II.7 մասերով սահմանված կանոնները պահպանելու պահանջը՝ II.8. մասի դրույթների պահպանմամբ:

Վերը նշված կանոնները չպահպանելու դեպքում նշված գործողությունների իրականացման հետ կապված ծախսերը ենթակա չեն Համայնքի կողմից ֆինանսավորման:

Դրամաշնորհի շահառուների կողմից այդ կանոնների պահպանումը պարզելու նպատակով Հանձնաժողովն իրականացնելու է հետստուգումներ: Դրամաշնորհային պայմանագրերով պետք է հստակորեն և ուղղակիորեն ապահովվի Հանձնաժողովի, ներառյալ Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի, ինչպես նաև Աուդիտորների դատարանի՝ Համայնքի կողմից ֆինանսական միջոցներ ստացած բոլոր կատարողների և նրանց կոնտրագենտների նկատմամբ փաստաթղթային, ինչպես նաև տեղում իրականացվող հսկողության լիազորությունների իրականացումը:

Սույն մասի դրույթները համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) կիրառվում են շահառուի գործընկերների կողմից կնքվող պայմանագրերի նկատմամբ:

## **II.2. Պայմանագրերի կնքմանը մասնակցելու իրավունքը**

### **II.2.1 Քաղաքացիության վերաբերյալ կանոնը**

Եթե օժանդակության տրամադրման համար դրամաշնորհների շահառուներից պահանջվում է պետական գնումներ կատարել, ապա նրանք պետք է պահպանեն պետական գնումներին մասնակցելու իրավունքի հետ կապված կանոնները, որոնք նախատեսված են համագործակցության տարբեր ծրագրերի վերաբերյալ համապատասխան կանոնակարգերով, ինչպես նաև հիմնական ակտերով կամ Եվրոպական միության մասին պայմանագրի V բաժնի (ԸԱԱՔ/ԱՊԵՔ) իրականացման վերաբերյալ այլ ակտերով:

Հայտատուներն իրենց հայտում պետք է նշեն իրենց քաղաքացիության երկիրը՝ ներկայացնելով իրենց քաղաքացիությունը հավաստող ապացույցներ, որոնք սովորաբար պահանջվում են իրենց ազգային օրենսդրության համաձայն:

Այս կանոնը չի տարածվում մրցույթին մասնակցող կամ ծառայությունների մատուցման՝ դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող պայմանագրի կողմ

հանդիսացող ծառայություններ մատուցողների կողմից առաջարկվող փորձագետների վրա, որոնք կարող են լինել ցանկացած երկրի քաղաքացի: Այս դրույթը չի հակասում Համայնքի՝ գնումներին վերաբերող կանոններով սահմանված որակական և ֆինանսական պահանջներին:

## **II.2.2 Ծագման վերաբերյալ կանոնը**

Համագործակցության և արտաքին օժանդակության տարբեր ծրագրերի վերաբերյալ համապատասխան կանոնակարգերի, ինչպես նաև հիմնական ակտերի կամ Եվրոպական միության մասին պայմանագրի V բաժնի (ԸԱԱՔ/ԱՊԵՔ) իրականացմանը վերաբերող այլ ակտերի համաձայն՝ համայնքային գործիքի հիման վրա ֆինանսավորվող պայմանագրով ձեռք բերվող պարագաների և նյութերի ծագման վայրը պետք է լինի Համայնքը կամ համապատասխան պահանջները բավարարող որևէ երկիր: Այդ նպատակով «ծագում» տերմինը սահմանված է «Համայնքի մաքսային օրենսգիրքը սահմանելու մասին» Խորհրդի 1992 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2913/92 կանոնակարգի (ԵՏՀ) 23-րդ և 24-րդ հոդվածներով և Համայնքի՝ արտոնյալ նախապատվություն չունեցող ծագման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ օրենսդրությամբ:

Հայտատուներն իրենց հայտերում պետք է նշեն պարագաների ծագման վայրը: Ոչ ուշ, քան մինչև առաջին հաշիվ ապրանքագիրը ներկայացնելը կատարողը պետք է դրամաշնորհի շահառուին ներկայացնի այն սարքավորումների և փոխադրամիջոցների ծագման վայրը հավաստող ապացույցներ, որոնց մեկ միավորի գնման գինը գերազանցում է 5000 եվրոն: Ծագման վերաբերյալ ապացույցով պետք է հավաստվի ծագման մասին նշման համապատասխանությունը Համայնքի համապատասխան օրենսդրությամբ սահմանված կանոններին:

## **II.2.3 Քաղաքացիության և ծագման վերաբերյալ կանոններից բացառությունները**

Քաղաքացիության և ծագման վերաբերյալ կանոններից բացառությունները սահմանված են համագործակցության տարբեր ծրագրերի մասին կանոնակարգերով:

## **II.2.4 Պայմանագրերի կնքման գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու հիմքերը**

Տես՝ Ֆինանսական կանոնակարգի 93-րդ հոդվածը:

## **II.2.5 Պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը**

Տես՝ Ֆինանսական կանոնակարգի 94-րդ հոդվածը:

## **II.3. Մրցութային բոլոր ընթացակարգերի համար ընդհանուր կանոնները**

Մրցութային փաստաթղթերը պետք է կազմվեն միջազգային լավագույն փորձին համապատասխան: Մեփական փաստաթղթերը չունենալու դեպքում դրամաշնորհի շահառուները կարող են օգտագործել Հանձնաժողովի՝ արտաքին գործողություններին



վերաբերող կայքէջում տեղադրված օրինակելի փաստաթղթերը (մասնավորապես մրցութային փաստաթղթերի փաթեթը): Դրամաշնորհի շահառուների կողմից հաստատված մրցութային փաստաթղթերը Եվրոպական հանձնաժողովի կողմից չեն հրապարակվում:

Մրցույթի հայտերի և մասնակցության դիմումների ստացման համար նախատեսված ժամկետները պետք է բավականաչափ երկար լինեն, որպեսզի շահագրգիռ կողմերը բավարար և անհրաժեշտ ժամանակ ունենան իրենց հայտերը պատրաստելու և ներկայացնելու համար:

Պահանջներին համապատասխանող ճանաչված մասնակցության բոլոր դիմումները և մրցութային հայտերը պետք է գնահատվեն և դասակարգվեն գնահատման հանձնաժողովի կողմից՝ ըստ բացառման, ընտրության և պայմանագրի կնքման չափանիշների, որոնք հայտարարվում են նախապես: Գնահատող հանձնաժողովի անդամների թիվը պետք է լինի կենտ և առնվազն երեք, որոնք պետք է տիրապետեն մրցույթի հայտերի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն տալու համար անհրաժեշտ բոլոր տեխնիկական և վարչական կարողություններին: Շահառուն պետք է ապահովի, որ գնահատող հանձնաժողովի անդամների մոտ շահերի բախում առաջացնող իրավիճակ չստեղծվի: Նման իրավիճակ առաջանալու դեպքում համապատասխան անդամը պետք է ձեռնպահ մնա և այդ մասին տեղեկացնի շահառուին:

Եվրոպական համայնքի կողմից ֆինանսավորվող պայմանագրեր կատարող շահառուն պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկի գործողության կառավարման մեջ խախտումների, խարդախության, կոռուպցիայի կամ այլ անօրինականությունների դեպքերը կանխելու ուղղությամբ: Կատարողը պետք է անհապաղ տեղեկացվի խախտումների, խարդախության և կոռուպցիայի բոլոր կասկածելի և փաստացի դեպքերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ շահառուի կողմից ձեռնարկված միջոցների մասին:

## **II.4. Ծառայությունների մատուցման պայմանագրերը կարգավորող կանոնները**

### **II.4.1 200 000 եվրո կամ ավելի բարձր ունեցող պայմանագրերը**

Ծառայությունների մատուցման՝ 200 000 եվրո կամ ավելի բարձր գին ունեցող պայմանագրերը պետք է կնքվեն գնումների մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող միջազգային սահմանափակ մրցույթի միջոցով:

Գնումների մասին հայտարարությունը պետք է հրապարակվի բոլոր համապատասխան լրատվամիջոցներում, մասնավորապես դրամաշնորհի շահառուի կայքէջում, միջազգային մամուլում և այն երկրի ազգային մամուլում, որտեղ իրականացվում է տվյալ գործողությունը, կամ մասնագիտական այլ պարբերականներում:

Հայտարարության մեջ պետք է նշվի մասնակիցների թիվը, որոնց առաջարկվելու է հայտ ներկայացնել: Նշված թիվը պետք է լինի չորսից ութի միջակայքում և պետք է բավարար լինի իրական մրցակցություն ապահովելու համար:

Մասնակցության դիմում կարող են ներկայացնել ծառայություններ մատուցող բոլոր

պոտենցիալ հավակնորդները, որոնք բավարարում են II.2 մասով նախատեսված պահանջները, սակայն մրցույթի հայտ կարող են ներկայացնել միայն ընտրության հրապարակված չափանիշները բավարարող թեկնածուները՝ դրամաշնորհի շահառուի գրավոր հրավերի հիման վրա:

#### **II.4.2 200 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը**

Ծառայությունների մատուցման՝ 200 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը պետք է կնքվեն մրցակցային բանակցությունների միջոցով՝ առանց հայտարարության, որի դեպքում դրամաշնորհի շահառուներն իրենց ընտրությամբ խորհրդակցում են ծառայություններ մատուցող առնվազն երեք սուբյեկտի հետ և նրանցից մեկի կամ մի քանիսի հետ բանակցություններ վարում պայմանագրի պայմանների շուրջ:

10 000 եվրո կամ ավելի ցածր գին ունեցող ծառայությունների ձեռքբերման համար շահառուն կարող է պատվերները տեղաբաշխել մեկ անձից գնման ձևով:

### **II.5. Մատակարարման պայմանագրերը կարգավորող կանոնները**

#### **II.5.1 150 000 եվրո կամ ավելի բարձր գին ունեցող պայմանագրերը**

Մատակարարման՝ 150 000 եվրո կամ ավելի բարձր գին ունեցող պայմանագրերը պետք է կնքվեն գնումների մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող միջազգային բաց մրցույթի միջոցով:

Գնումների մասին հայտարարությունը պետք է հրապարակվի բոլոր համապատասխան լրատվամիջոցներում, մասնավորապես դրամաշնորհի շահառուի կայքէջում, միջազգային մամուլում և այն երկրի ազգային մամուլում, որտեղ իրականացվում է տվյալ գործողությունը, կամ մասնագիտական այլ պարբերականներում:

Հայտ կարող են ներկայացնել ապրանքներ մատակարարող բոլոր պոտենցիալ հավակնորդները, որոնք բավարարում են II.2 մասով նախատեսված պահանջները:

#### **II.5.2 60 000-ից մինչև 150 000 եվրո գին ունեցող պայմանագրերը**

Այս պայմանագրերը կնքվում են տեղական մակարդակով հայտարարված բաց մրցույթի ընթացակարգով. գնումների մասին հայտարարությունը հրապարակվում է բոլոր համապատասխան լրատվամիջոցներում, սակայն միայն այն երկրում, որտեղ իրականացվում է գործողությունը:

Տեղական բաց մրցույթում պետք է ապահովվի, որ պահանջները բավարարող այլ մատակարարներն ունենան տեղական ընկերությունների հետ հավասար հնարավորություններ

#### **II.5.3 60 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը**

Ապրանքների մատակարարման՝ 60 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը պետք է կնքվեն մրցակցային բանակցությունների միջոցով՝ առանց հայտարարության, որի դեպքում դրամաշնորհի շահառուներն իրենց ընտրությամբ խորհրդակցում են առնվազն երեք մատակարարի հետ և նրանցից մեկի կամ մի քանիսի հետ բանակցություններ

վարում պայմանագրի պայմանների շուրջ:

10 000 եվրո կամ ավելի ցածր գին ունեցող պարագաների ձեռքբերման համար շահառուն կարող է պատվերները տեղաբաշխել մեկ անձից գնման ձևով:

## **II.6. Աշխատանքների կատարման պայմանագրերը կարգավորող կանոնները**

### **II.6.1 5 000 000 եվրո կամ ավելի գին ունեցող պայմանագրերը**

Աշխատանքների կատարման՝ 5 000 000 եվրո կամ ավելի գին ունեցող պայմանագրերը պետք է կնքվեն գնումների մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող միջազգային բաց մրցույթի միջոցով:

Գնումների մասին հայտարարությունը պետք է հրապարակվի բոլոր համապատասխան լրատվամիջոցներում, մասնավորապես դրամաշնորհի շահառուի կայքէջում, միջազգային մամուլում և այն երկրի ազգային մամուլում, որտեղ իրականացվում է տվյալ գործողությունը, կամ մասնագիտական այլ պարբերականներում:

Մրցույթի հայտ կարող է ներկայացնել II.2 մասով նախատեսված պահանջները բավարարող ցանկացած կատարող:

### **II.6.2 300 000-ից մինչև 5 000 000 եվրո գին ունեցող պայմանագրերը**

Այս պայմանագրերը կնքվում են տեղական մակարդակով հայտարարված բաց մրցույթի ընթացակարգով. գնումների մասին հայտարարությունը հրապարակվում է բոլոր համապատասխան լրատվամիջոցներում, սակայն միայն այն երկրում, որտեղ իրականացվում է գործողությունը:

Տեղական բաց մրցույթում պետք է ապահովվի, որ պահանջները բավարարող այլ կատարողներն ունենան տեղական ընկերությունների հետ հավասար հնարավորություններ:

### **II.6.3 300 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը**

Աշխատանքների կատարման՝ 300 000 եվրոն չգերազանցող պայմանագրերը պետք է կնքվեն մրցակցային բանակցությունների միջոցով՝ առանց հայտարարության, որի դեպքում դրամաշնորհի շահառուներն իրենց ընտրությամբ խորհրդակցում են առնվազն երեք կատարողի հետ և նրանցից մեկի կամ մի քանիսի հետ բանակցություններ վարում պայմանագրի պայմանների շուրջ:

10 000 եվրո կամ ավելի ցածր գին ունեցող աշխատանքների համար շահառուն կարող է պատվերները տեղաբաշխել մեկ անձից գնման ձևով:

## **II.7. Մրցակցային բանակցությունների կիրառումը**

Դրամաշնորհի շահառուն կարող է կիրառել մրցակցային բանակցությունները՝ մեկ անձից գնման ձևով, Կիրարկող կանոնների 242–րդ, 244–րդ և 246–րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, որոնք համապատասխանաբար վերաբերում են ծառայություններին, մատակարարումներին և աշխատանքներին:

Ինչ վերաբերում է Կիրարկող կանոնների 168(2) հոդվածի իմաստով ճգնաժամային իրավիճակներին, ապա հարկ է նշել, որ նման իրավիճակների գոյության և ավարտի մասին դրամաշնորհի շահառուին տեղեկացնում է հենց Հանձնաժողովը:

Դրամաշնորհի շահառուն կարող է մրցակցային բանակցությունները կիրառել նաև հետևյալ դեպքերում.

ա) երբ պատվերը տրվում է Եվրոպական հանձնաժողովի համապատասխան ծառայության կողմից ճանաչված՝ հումանիտար օգնության գծով գնումների կենտրոնական գրասենյակին:

Պետք է նշել, որ գնումների կենտրոնական գրասենյակն անկախ և շահույթ չհետապնդող մասնագիտական կառույց է, որը մասնագիտացած է մատակարարումների տեխնիկական և առևտրային գծով կառավարման գործում.

բ) ծախսերի ստուգման մասին տեղեկանքի և ֆինանսական երաշխիքի տրամադրման նպատակով, եթե դրանք պահանջվում են դրամաշնորհի մասին պայմանագրով:

## **II.8. Հատուկ դեպքերը**

### **II.8.1 Համաֆինանսավորումը**

Դրամաշնորհի շահառուն կարող է կիրառել այլ դոնորների կողմից սահմանված կանոններն այն դեպքերում, երբ.

– գործողությունը համաֆինանսավորվում է մի քանի դոնորների կողմից,

– դոնորներից մեկը, որի ներդրման մասնաբաժինը գործողության ընդհանուր արժեքի ֆինանսավորման մեջ ավելի մեծ է, քան Հանձնաժողովինը, դրամաշնորհի շահառուի համար սահմանում է գնումների կանոններ, որոնք տարբերվում են II.3–II.6 մասերով սահմանված կանոններից:

Բոլոր դեպքերում II.1 և II.2 մասերով սահմանված ընդհանուր սկզբունքները և քաղաքացիության ու ծագման մասին կանոնները շարունակում են կիրառվել:

### **II.8.2 Անդամ երկրների պետական կառավարման մարմինները**

Այն դեպքերում, երբ դրամաշնորհի շահառուն հանդիսանում է պայմանավորվող մարմին և (կամ) պայմանավորվող սուբյեկտ՝ գնման ընթացակարգերի նկատմամբ կիրառվող Համայնքի հրահանգների իմաստով, ապա այն պետք է կիրառի այդ փաստաթղթերով սահմանված կանոնները՝ II.3–ից II.7 մասերով սահմանված կանոնների փոխարեն: Բոլոր դեպքերում II.1 և II.2 մասերով սահմանված ընդհանուր

սկզբունքները և քաղաքացիության ու ծագման մասին կանոնները շարունակում են կիրառվել:

### **II.8.3 Միջազգային կազմակերպությունները և համաֆինանսավորումը**

Եթե Համայնքի կողմից ֆինանսավորվում է միջազգային կազմակերպության կողմից իրականացվող գործողություն կամ երրորդ պետության, տարածաշրջանային կազմակերպության կամ անդամ պետության կողմից համաֆինանսավորվող գործողություն, ապա մասնակցության իրավունքին վերաբերող հատուկ կանոնները սահմանվում են համագործակցության տարբեր ծրագրերի մասին կանոնակարգերով:

Եթե դրամաշնորհի շահառուն միջազգային կազմակերպություն է, այն կիրառում է գնումների իր սեփական ընթացակարգերը՝ պայմանով, որ դրանք ապահովում են միջազգայնորեն ընդունված չափանիշներին համարժեք երաշխիքներ: Հակառակ դեպքում կամ հատուկ դեպքերում Հանձնաժողովը և միջազգային կազմակերպությունը համաձայնություն ձեռք կբերեն այլ կանոններ կիրառելու վերաբերյալ, որոնք իսկապես ապահովում են նման երաշխիքներ:

Եթե գործընկերը միջազգային կազմակերպություն է, այն կիրառում է գնումների իր սեփական ընթացակարգերը՝ պայմանով, որ դրանք ապահովում են միջազգայնորեն ընդունված չափանիշներին համարժեք երաշխիքներ: Հակառակ դեպքում կամ հատուկ դեպքերում Հանձնաժողովը և միջազգային կազմակերպությունը համաձայնություն ձեռք կբերեն այլ կանոններ կիրառելու վերաբերյալ, որոնք իսկապես ապահովում են նման երաշխիքներ:

Սույն մասում նշված միջազգային կազմակերպությունները Կիրարկող կանոնների 43(2) հոդվածով սահմանված կազմակերպություններն են:

### **II.8.4 Գնումների կենտրոնական գրասենյակները**

Եթե դրամաշնորհի շահառուն որպես ծառայություններ մատուցող օգտվում է գնումների կենտրոնական գրասենյակի ծառայություններից, ապա շահառուն այդ գրասենյակն ընտրում է ծառայությունների մատուցման պայմանագրերի համար վերը սահմանված ընթացակարգերի համաձայն:

Գնումների կենտրոնական գրասենյակն անկախ և շահույթ չհետապնդող մասնագիտական կառույց է, որը մասնագիտացած է մատակարարումների տեխնիկական և առևտրային գծով կառավարման գործում:

Գնումների կենտրոնական գրասենյակը պետք է պահպանի դրամաշնորհի շահառուի համար սահմանված պարտադիր կանոնները: Եթե դա հումանիտար օգնության գծով գնումների կենտրոնական գրասենյակ է, որը որպես այդպիսին ճանաչվել է Եվրոպական հանձնաժողովի համապատասխան ծառայության կողմից, ապա այն պետք է պահպանի դրա հաստատման ժամանակ համաձայնեցված կանոնները՝ քաղաքացիության և ծագման վերաբերյալ վերը նշված II.2 մասով սահմանված կանոնների պահպանմամբ: